

## ԻՆՉՈՒ ՓԱԽՉԵՄ...

ԱՐՍԷՆ ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆԻ

Միշտ նախանձում եմ այն ուրախ մարդկանց,  
Որոնք թւում են ինձ գոհ, երջանիկ.  
Եւ կարօտում եմ, որ մի օր քրնից  
Արթնանամ զըլարթ ինչպէս մի մանկիկ.  
Բայց միշտ տրորած չար երազներից,  
Եւ ցնցումներից թոյլ ամբողջ մարմնով.  
Օ՛հ, ես զգում եմ այդ տեսակ կեանքից,  
Ապրել չեմ ուզում վրդոված հոգով...

Բայց ինչո՞ւ ծովը մըրիկներից,  
Դարերից յուզած չէ ուզում ցամքել.  
Կամ թէ երկնքում ամպից, կայծակից  
Ինչո՞ւ աստղերը չեն ուզում կորչել...  
Եւ ինչո՞ւ փախչեմ այս կեանքի վշտից,  
Փնտռելով հանգիստ մայր հողի ծոցում.  
Կամ ինչպէ՞ս թողնեմ չքնաղ սիրուհիս  
Լացով — արցունքով աշխարհի միջում...

Բա.քու. 1889 թ., յունւարի 31-ին: